

Հասինի գրութիւնները հրատարակող հոլանդացին՝ M. Houtsma՝ իր արած դիտողութիւնների եւ տուած բացատրութիւնների մէջ, մեծ գովասանքով է խօսում նրա մասին .

“Հասինի նամակները, ասում է նա, լիքն էին պարսկերէն առանձներով . մի անգամ էլ յառաջ է բերած թրքերէն մի առանձն, բայց Շահին իր նամակները միշտ արաբերէն էր գրում . . . : Սա գիտէր նաեւ հայերէն” : “Առհասարակ նա շատ խելացի եւ հմուտ արեւելքի էր” :

“Պրոֆ. Գոլիուսի աշխատակիցների մէջ Հասին լաւագոյն արաբերէն գրողն էր, ի բաց առեալ բնականաբար Մոհամէդ-ալ-Հուսթիւսին : Պարսկերէն յիշատակութիւնները ցոյց են տալիս Հասինի սրամիտ եւ միանգամայն զարգացած մարդ լինելը : Նրա արաբերէն գրութիւնները արժանի են արաբական Հատընտիր Ընթերցուածքների (Christomatie) մէջ դրուելու . . .” :

“1669 Մայիս 31ից յետոյ ոչ մի տեղեկութիւն չկայ Հասինի մասին . մեռա՞ւ նա թէ Հոլանդայից հեռացաւ, յայտնի չէ . հաւանական է որ նա մեկնած լինի Արեւելք, իր հայրենիք” :

Houtsma վերջացնում է հետեւեալ դառն տողերով իր հայրենակիցների հասցէին .

“Մեր երկրում Հասին Վանդիի համար այլ եւս գործ չկար, որովհետեւ Գոլիուսի մահից յետոյ արաբերէնի ուսուցչի պէտք չէին զգում : Մեր հայրերը Արեւելքի հետ առուտուր անելով մեծ հարստութիւն էին դիզել . նրանց որդիքը այդ հարստութիւնը վայելում էին, առանց որ եւ է ծախք կամ զոհողութիւն յանձն առնելու : Հատ ստանալ եւ քիչ տալ՝ անգլիացի եւ հոլանդացի վաճառականների համար սկզբունք էր դարձել, որի տխուր հետեւանքը նրանք շուտով պիտի զգային¹” :

(Շարտահանկեր) :

ՍԱՐՈՂԻՄՆՍ



ԽՈՒՍՏՈՒՄ ԱՐՈՎԵՆՆԻ ԳԵՐԵՉՄԵՆԸ ԱԽՈՍՏԿՈՒՄ*

Անցեալ 1925 թուին երբ որպէս Նուիրակ Ս. Էջմիածնի այցելում էի Հեռաւոր Արեւելքի Հայ համայնքներին՝ Մանչուրիայի Սարբին քաղաքում հանդիպեցի կովկասահայ Սարգիս Գրծիլեանին, որը Հեռաւոր Արեւելքի Հայ համայնքների կենդրոնական անձն է, որին դիմում են բոլորը իրենց կարիքների համար եւ կապ պահպանում իրենց ամբողջ կեանքի ընթացքում :

Նա ինձ տալով Հեռաւոր Արեւելքի եւ Սիրիայի Հայութեան ճշգրիտ պատկերը պատմեց նաեւ Սալաուտուր Արուսեանի գերեզմանի մասին հետեւեալը, որը գրի առայ բառացի նրա ասածով :

«Երբ ես առաջին անգամ ծովային ճանապարհով եկայ Վլատիլաստուկ, այն տեղ կային մի քանի աքսորուած հայեր, այնտեղ էր նաեւ լուսանկարիչ Բուդաղեան, եւս մի ուրիշ լուսանկարիչ Յովհաննէս անուանով :

Այս Յովհաննէսը նամակով ծանօթացրեց ինձ, Սախալինում աքսորուած Կուկուսեանի խմբից Ռուբէն Դերձակեանի հետ . նոյն ձեւով էլ ծանօթացայ քաղաքական աքսորեալ Թիֆլիսեցի Մանուկարեանի հետ, որը իր մահուան վերջին տարիներում Բլազավելչինսկ քաղաքում հրատարակում էր ուսերէն լեզուով լրագիր : Սրանց հետ ես ունեցայ նամակադրութիւն :

Մի օր ինձ մօտ եկաւ մի անծանօթ մարդկարձ հասակով ու հարցրեց հայերէն՝ Սարգիս Գրծիլեանը դո՞ւ ես, զնանք սենեակ, մի քանի խօսք ունիմ ասելու . մտանք սենեակ եւ յայտնեց որ ինքը Կուկուսեանի խմբիցն է, անունը Մերուն, յանձնեց ինձ մի կապոց, որի մէջ կար նաեւ 300—400 ուրլի դրամ եւ ասաց, թէ ինձ հետեւում է կառավարութիւնը, եթէ ինձ բռնեն թող այս դրամը եւ իրերը մնայ քեզ մօտ պահ, եւ յայտնեց կը գայ Երեկոյեան ինձ մօտ, երբ մութը կ'ընկնի : Եկաւ Երեկոյեան բեխերը խուզած եւ այնպէս փոխուած, որ ես կարծեցի յապտնացի է :

Երեկոյեան պատմեց, որ ինքը Կուկուսեանի խմբի հետ աքսորուած է Սախալին, որ ինքը գիտէ լուսանկարչութիւն, որ

¹ “Uit de oostersche correspondentie van Erpenius, Jac. Golius en L. Warner . . . Door M. Th. Houtsma, Amsterdam 1887, in 4^o, էջ 69—74.

* Նր հրատարակներ վերապահութեամբ : Անարկուած շրջիմը ընայ թեթեւ Գէորգ Սրովեանի, որ աքսորուած էր ի Սիբիրիա անցած Սարու երկրորդ կէսին : Նոյնազր. “Հանդ. Ամս.” :

1906 թուին դալիս է Նարարուսկ քաղաքից Սախալին Մարգարիտովի արչաւարումը եւ իրեն եւս որպէս լուսանկարիչ տանում է Ախոտսկ, որտեղ ինքը լուսանկարում է գանազան տեսարաններ:

Ինքը շատ սիրելի է դառնում Մարգարիտովին, որին եւ խնդրում է որ իրեն ազատէ Սախալինից եւ տանէ Նարարուսկ:

Այս այն Մարգարիտովն էր, որ Ամուրեան շրջանի եւ Մանչուրիայի դպրոցների վերատեսուչ էր, իսկ մեռնելուց առաջ քաղաքագլուխ էր Վլադիվաստոկում:

Մարգարիտովը միջնորդում է կառավարութեան առաջ եւ տանում է իր երաշխաւորութեամբ Նարարուսկ, որտեղ եւ գրադոււմ է լուսանկարչութեամբ, այսպիսով նա տնտեսում է ինձ յանձնած 300—400 ռուբլի: Խնդրեց որ յաջողեցնեմ իր փախուստը Վլադիվաստոկից դէպի արտասահման, եւ իրօք յաջողեցրի՞ք մի վրացու՝ անունը Դաւիթ եւ մի հայի՝ Արմաւրից քաղաքական աքսորեալ Մակար Նիկիտիչ Պոպովի հետ, որ նա փախաւ Վլադիվաստոկից Ֆուգան, այնտեղից էլ Սինդապուր: Սինդապուրից ես ստացայ մի նամակ նրանից:

Գնալուց առաջ նա նուիրեց ինձ մի շարք իր լուսանկարած տեսարաններից Սախալինում եւ Ախոտսկում, որոնց մէջ կար եւ մի նկար, որը ներկայացնում էր մի չարդախ (չորս սիւն տնկած վրան ծածկած տախտակներով), որի տակ կար մի գերեզման, տալով այս նկարը ասաց այս նկարը պահիր որպէս սրբութիւն, սա խաչատուր Արովեանի գերեզմանն է, որը Ախոտսկում ինձ ցոյց տուեց մի աքսորեալ ծերունի Ռուս ասելով ռուսերէն, թէ «դու Հայ ե՞ս, ահա այստեղ է թաղուած Հայ խաչատուր Արովեանը որը աքսորուած էր այստեղ»:

Այս նկարը պահում էի սրբութեամբ եւ մեծ դուրդուրանքով սակայն այրուեց իմ գրադարանի եւ միւս նկարների հետ տունս հրդեհի ժամանակ: Ինձ ցաւ պատճառեց ոչ այնքան իմ ունեցած խոշոր նիւթական վնասը, որքան այդ նկարի կրակի ճարակ դառնալը, որպէս խաչատուր Արովեանի գերեզմանի նկար:

Սարգիս Գրձիլեանը մեծ ցաւով էր պատմում այս նկարի կորուստը, որովհետեւ Ծերունը իրեն պահ է տուած եղել եւ սպասել է թէ մի օր կարող է իրենից պահանջել, այլ եւ նա մտադրութիւն է ունեցել

վերադառնալ հայրենիք՝ Կովկաս եւ այնտեղ հրատարակել այս գիւտը, որպէս լոյս սփռող մի էջ խաչատուր Արովեանի անյայտանալու պատմութեան:

Ո՞րքան հաւանական է խաչատուր Արովեանի Սիրիւր աքսորուելու պատմութիւնը եւ կարո՞ղ է պատահել որ Արովեանը թաղուած լինի Ախոտսկում:

Իմ ճանապարհորդութեանս ընթացքում մեծ ցանկութիւն ունէի գնալ Սախալին, այնտեղից էլ Ախոտսկ ստուգելու Արովեանի գերեզմանի ճշգրիտ լինելը հենց Ախոտսկում, սակայն իմ հաւաքած տեղեկութիւններից երեւաց, որ նախ Սախալինում այլ եւս չկան հայ աքսորեալներ, միայն Սախալինի դիմաց Ամուր գետի գետաբերան Նիւկուսեակ քաղաքում ապրում են երկու ընտանիք հայեր, որոնք մանր առեւտրականներ են եւ նոքա էլ մտադիր են այնտեղից հեռանալու եւ երկրորդ թէ ժամանակա եւ թէ իմ նիւթական միջոցները չէին ներում Սախալին-Ախոտսկ հիւսիսային երկար ճանապարհը կտրելու, ուստի բաւականացայ միայն լրացուցիչ տեղեկութիւններ հաւաքել այս կորած նկարի իսկութիւնը ստուգելու:

1. Կուկունեանի խմբի մամենապատրաստուածներից եւ մտաւորականներից մէկը եղել է այդ վերոյիշեալ լուսանկարիչ Ծերունը, որը չէր կարող թեթեւ նայել այս խնդրի վրայ եւ ստեղծել մի պատմութիւն խաչատուր Արովեանի մասին, նա անշուշտ շատ լրջութեամբ է վերաբերուել այս խնդրին եւ անմիջապէս նկարել, մի օր հրատարակելու հայ մամուլի մէջ, սակայն իր քաղաքական իրերուն դրութիւնը, ցարական կառավարութեան նրան հետապնդելը եւ փախչելու մտադրութիւնը նրան խանգարել են եւ որպէս զի կորստեան չմատնուի նա՝ իր փախստից առաջ Արովեանի գերեզմանի նկարը յանձնել է Սարգիս Գրձիլեանին ի պահ:

2. Վլադիվաստոկում հանդիպեցի Կուկունեանի կարսեցի Մուրադին, որը դարձեալ աքսորուած է եղել Սախալին տաժառակիր աշխատանքի Կուկունեանի եւ Ծերունի հետ. այժմ բոլորովին ծերացած իր ընտանիքով ապրում է Վլադիվաստոկում, միակն էր Կուկունեանի խմբից, որ կենդանի էր. իմ հարցերին պատասխանեց, որ ինքը եւս Սախալինում լսել է եւ յիշում է որ Ծերունը Մարգարիտովի արչաւարումին հետ

գնաց Ախոտսկ, վերադարձաւ, նրա միջնորդութեամբ էլ նա ազատուեց, իսկ իրենք մնացին եւ յիշում էր որ վերադառնալուն ինչ որ պատմութիւններ էր անում Խ. Արուսեանի գերեզմանի մասին:

3. Երեւանում Հայ մտաւորականների մի շրջանում, երբ ես պատմում էի վերոյիշեալ տեղեկութիւնները, Ս. Էջմիածնի ճեմարանի նախկին վաստակաւոր ուսուցիչ Ստեփան Կանայեացը պատմեց որ Գերմանիայում, իր ուսանողութեան տարիներում, Աստրախանից՝ իր ընկերոջից 1883 թուին ստանում է մի նամակ, որտեղ եւ գրել էին իրեն, որ ուսւնաւոր գրող եւ հրապարակախօս Նիկոլայ Չերնիշևսկին Աստրախանում պատմել է հայերին, թէ ինքը Սիբիրիայում աքսորուած ժամանակ տեսել է Հայ Խաչատուր Աբովեանին, որ նոյնպէս աքսորուած էր եղել Սիբիր:

Հայ աքսորականները ինձ պատմում էին որ իրենց թէ տաժանակիր աշխատանքի եւ թէ ազատ աքսորական եղած ժամանակ մի տեղ չէին թողնում, այլ շարունակ տեղափոխում էին զանազան աքսորավայրեր, մէկ հիւսիսային Սիբիրիայի սառնամանիքները, մէկ Հեռաւոր Արեւելքի ծայրերը, մէկ միջին Սիբիրեա՝ Իրկատսկու շրջանները, մէկ Չինական եւ Մոնղոլական սահմանամերձ վայրերը:

Չերնիշևսկու աքսորի պատմութիւնից երեւում է, որ նրան աքսորել են 1864 թուին Մանգանական Կաղա գիւղը, որը գտնուում է Ամուր գետի աջ ափին՝ ներքին հոսանքում, նոյնանուն փոքրիկ լճակի մօտ, ոչ հեռու Մարիինսկ քաղաքից, Սախալին կղզու դիմաց. այդտեղից տեղափոխել են Անդրբայկալեան նահանգը՝ Մոնղոլական սահմանում Ներչինսկ քաղաքի Ալեքսանդրեան դործատներում տաժանակիր աշխատանքի, իսկ 1871 թուին տեղափոխում են որպէս ազատ աքսորեալ Եակուտսկի շրջանի Վիլիլյսկ քաղաքը, որը գտնուում է Վիլիլյ գետի աջ ափին (Լենա գետի վտակը ձախ ափից), Եակուտսկ քաղաքից 710 վերստ հեռու: Այստեղ Չերնիշևսկին ապրում է փակուած կեանքով մինչեւ 1883 թիւը. այս թուին թոյլտուութիւն է ստանում վերադառնալ հայրենիք, սակայն ո՛չ իր հայրենի քաղաքը՝ Սարատով, այլ Աստրախան, որտեղ եւ ապրում է մինչեւ 1885 թիւը:

Չերնիշևսկու եւ միւս աքսորականների նման Խաչատուր Աբովեանին եւս, ամենայն հաւանականութեամբ տեղափոխել են քաղաքից քաղաք, եւ Չերնիշևսկին իր աքսորավայրերից մէկում պատահել է Աբովեանին, լաւ ճանաչել, որի մասին եւ պատմել է Աստրախանում հայկական շրջանում:

Խաչատուր Աբովեանի գերեզմանի նկարի պատմութիւնը ցոյց է տալիս, որ Աբովեանը իր կեանքի վերջին տարիներում աքսորուած է եղել Ախոտսկ քաղաքը, Սախալին կղզուց հիւսիս՝ Ախոտի ծովի ափին, որտեղ եւ յայտնի է եղել որպէս հայ աքսորական:

Երեւանում երկու կարծիք կայ Խ. Աբովեանի անյայտանալու մասին. մէկ իբր նա սպանուած է թուրքերի ձեռքով եւ թաղուած ինչ որ թուրքի ալդու պատի տակ եւ երկրորդ իբրեւ թէ նստեցրել են «սեւ կարեթը» (ծածկած կառքը) եւ տարել:

Հետախուզութիւնը ցոյց է տուել որ սխալ է առաջին կարծիքը, որ Խ. Աբովեանը սպանուած եւ թաղուած չէ եղել եւ նրա մարմինը կամ ոսկրների մնացորդները ոչ մի տեղ չի գտնուել:

Երկրորդ կարծիքը՝ «սեւ կարեթ» նստեցնել եւ տանելը ամենահաւանականն է, ի նկատի ունենալով քառասնական-լիսունական թուականների ցարական դաժան քաղաքականութիւնը որ միջոցների առաջ կանգ չէր առնում ոչնչացնելու ամէն մի ազատագրական շարժում, անյայտացնելով այդ շարժման առաջնորդներին:

«Սեւ կարեթը» բանտարկութեան, աքսորի եւ անյայտացման խաղաղ միջոցն է եղել ցարական կառավարութեան:

Խաչատուր Աբովեանը, մէկը այն բողոքող տարրից եւ Դորպատեան ազատատենչ վետերաններից, թէեւ պետական պաշտօնեայ, սակայն Երեւանի հայ մտաւորականութեան դեկավար՝ իւր հայրենասիրական տենչերով եւ արծարծուած մտքերով համարուել է պետական տեսակիտով վնասակար տարր եւ անյայտացման է մատնուել «սեւ կարեթով», որին տանելով Սիբիր, ենթարկել են տաժանակիր աշխատանքի կամ ազատ աքսորի, թափառեցնելով Սիբիրիայի սառնամանիքների վայրենի անկիւնները մինչեւ Ախոտսկ, որտեղ եւ կնքել է իր մահականացուն:

Վերոյիշեալ հանդամանքները ի նկատի առնելով, ես հաւանական եմ համարում, որ մեր մեծ հայրենասէր Խաչատուր Աբովեանը 1848 թուին աքսորուած է եղել Սիրիւր եւ որի գերեզմանը գտնուում է Հեռաւոր Արեւելքի Ախոտսկ քաղաքում:

ՌՈՒՐՆՆ Ժ. ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԱՍԵԱՆ

Եջմիածին:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՐԻՒՆԻ ՄԱՍԻՆ

(Պ. ՖԵՏԳԼԵԱՆԻ ՆԱԿՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ)

Ա.

Անկարող ստանալ ներկայումս եւ կանոնաւորապէս հետեւել ՀԱԻ, նորերս միայն հնարաւորութիւն ունեցայ թերթելու տարուայ թիւերը եւ ի միջի այլոց ծանօթացայ Պ. Ֆետգլեանի գրութեան (ՀԱ, 1926, թ. 5—6):

Աւելորդ չեմ համարում նախ քանի մի խօսք ասել յարգելի պարոնի այն յայտարարութեան առթիւ թէ Մաշթոց անուան ստուգարանութիւնը առաջարկել է ինքը տարիներ յառաջ դեռ 1905 թուին եւ ուրեմն առաջնութեան պատիւն իրեն է պատկանում:

Յաւում եմ, որ պարոնի ակնարկած ուսումնասիրութեան ցայտմ անդէտ մնալով, ակամայից անհաճութիւն եմ պատճառել ոչ միայն նրան, այլ եւ ինձ, որովհետեւ անդիտութիւնն այսպիսի դէպքերում անտխորժ է ամէնից յառաջ անտեղեակ բանասէրին, բայց աւելի եւս ցաւում եմ, որ պատուական պարոնը իր առաջնութիւնը պաշտպանելով չէ կարողացել մնալ վայելչութեան սահմանների մէջ:

Պ. Ֆետգլեան իրեն ներելի է համարում՝ կրկնել յիշողութիւնս եւ այնտեղից վեր հանել իր գիտի «վերջիշումը» այն հիմամբ, որ նուաստս ստանում էր «Անահիտ» հանդէսը, ինչպէս նեղութիւն է քաշել ստուգելու եւ հետեւապէս հետեւում իր գիտական աշխատանքներին, եւ ապշեցնող կէտ է

համարում, որ ես բերում եմ նոյն երկու օրինակները Տիրոց եւ Բարոց «նոյնութեամբ ոչ աւել եւ ոչ պակաս»:

Ասել է թէ 1905 թուին բախտ եմ ունեցել կարգալու Պ. Ֆետգլեանի ուսումնասիրութիւնը, պահել եմ յիշողութեանս ծալքերում նրա գիտը, որպէս զի 1926 թուին հոչակեմ եւ որ վշտալին է կորցեմ պարոնի փառքը: Ապշեցնող է համարում պարոնը օրինակների զուգադիպումը: Կարծեմ, հայ բանասէրին, անգամ ամենախոնարհին յայտնի պիտի լինի, որ հայոց մատենագրութեան մէջ ուրիշ անուն չկայ —ոց վերջաւորութեամբ, բացի երկուսից Տիրոց եւ Բարոց: Չյիշել այս, նշանակում է անբարեմիտ լինել եւ անտեղեակ ընթերցողին մոլորեցնել: Երկու իշխանական անուններն էլ ծանօթ են ամէն մի դպրոցականի Վարդանանց եւ Վահանանց պատմութիւնից եւ հազիւ թէ պէտք կայ ուսանելու Պ. Ֆետգլեանից: Այս միեւնոյն է, եթէ մի քերական յաւակնէր, որ միւսներն իրենից են քաղել, ասենք, փլուզանեմ եւ կորուսանեմ եւ կամ նման օրինակները:

Բ.

Այս ակամայ տողերից յետոյ դառնանք խնդրի էութեան, որ աւելի կարեւոր է, եւ կը տեսնենք, որ զուգադիպումն իսկ լոկ ձեւակաւն է:

Պ. Ֆետգլեան իր ասելով համեմատել է Մաշթոց Մաղդակի հետ, որովհետեւ mazd փոխուում է mašt-ի ինչպէս yazd-ը՝ yašt-ի: Եթէ այս է նրա հիմք, համեմատութիւնը սխալ է:

Պարսկերէն yazd- երբեք չի կարող փոխուել yašt-ի: Առաջինը ծագում է yazata ձեւից, որ է ապառնի դերբայ կրաւորականի, իսկ yašt է անցեալ դերբայ կրաւորականի yaz-բայից: Երկուսն էլ արմատական են, բայց հնչական փոխանցման կապ չկայ մէջտեղ:

Ուրիշ է ծագումով եւ կազմով mazd-ը <mand-dha, առաջինը՝ maⁿd- նոյն է յուն. μαδ-εῖν, սլաւոն. мыѡ-р, երկրորդը՝ dha-դնել՝ արմատը: d փոխուում է z յաջորդ dh-ից յառաջ եւ այս փոփոխութիւնն այլ կարգի է քան յազդ եւ յաշտ եւ mazd- անցնել mašt-ի չէ կարող:

Ինչ վերաբերում է մեր համեմատութեան, ելակէտս եւ մերձաւոր առիթը